

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՍԻՐԵՐԳՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ս. Ա. Աբովյան

1.

Համաշխարհային գրականության եւ արվեստի շատ նշանավոր գործեր ստեղծվել եւ ստեղծվում են սիրո կախարդական ներշնչանքով: Արվեստների ներշնչող գեղեցկատես Սուսային նշանավոր գրողներն ու արվեստագետները գտնում են ի դեմս իրենց սիրած էակի, ինչպես ասենք, Սայաթ-Նովան՝ իշխանուհի Աննայի, Պուշկինը՝ Նատալյա Գոնչարովայի, Եսենինը՝ Այսեդորա Դունկանի, Չարենցը՝ պատանեկան սերերից գատ՝ Արփենիկի եւ Արմենուհի Տիգրանյանի եւ այլն: Սիրո այդպիսի մեծ նվիրյալներ են եղել Բալզակը, Տուրգենևը, մարդկությանը հայտնի շատ հանճարեղ գրողներ:

Արվեստների հովանավոր Սուսայի քաղցր կախարդանքից են ծնվել նաեւ Ավ. Իսահակյանի շատ ստեղծագործություններ: Գրողներից ոմանց անդարձ գերում է հայրենիքի սերը (Ս. Նալբանդյան, Խ. Աբովյան, Բաֆֆի, Ռ. Պատկանյան), շատերին դրան զուգահեռ՝ անձնական, մարդկային սերը (Իսահակյան, Սայաթ-Նովա, Չարենց, Տերյան): Ընտրյալներից շատերին էլ ներշնչել է համապարփակ սերը հայրենի աշխարհի եւ բնության հանդեպ (Ալիշան, Բակունց, Թումանյան...):

Օլիմպոսի դափնեծառի հրաշապսակով է պծնում Սերը մեծ մարդկանց ճակատը, դարձնում նրանց վսեմ եւ առիքեմող: Անադարտ սիրով բռնկված հոգիները ճառագում են լույս եւ մաքրություն, «սիրո մեջ տիեզերանում է հոգին, եւ տիեզերքը՝ հոգիանում» (Ավ. Իսահակյան): Սերը դառնում է հանճարեղ էքսպրոմտների ակունք: Անվախճան սիրո մի մշտավառ ատրուշան է Ավ. Իսահակյանի ողջ ստեղծագործությունը: Մեծ է եղել նրա հոգին, անսահմանության պես անափ ու անծիր, իսկ նրա սիրտը մշտապես բարձավալ սիրո ու վշտերի չափումներում Իսահակյան-բանաստեղծը հետզհետե հակվում է դեպի փիլիսոփայական աշխարհընկալումը: Փիլիսոփայական աշխարհայեցողությունը Ավ. Իսահակյանի համար նաեւ ստեղծագործական մեկնակետ է, նրան ընթերցելու, գրական ժառանգությունը արժեքավորելու «ոսկյա բանալի»: Շատ խորն են Իսահակյան-սիրերգակի փիլիսոփայության արմատները: Այստեղ նա նմանվում է կիսով չափ դեպի պատմության խորքը շրջված մարգարեի, որը, վազանցելով ժամանակի եւ տարածության կտրվածքները, միտում է դեպի ապագայի հորիզոնները:

Ահավասիկ «Հավերժություն» արձակ բանաստեղծությունը, զարմանալի փիլիսոփայական մի երկ, որը հնչում է ավելի շատ որպես մարդկային հոգիների փիլիսոփայական տրամախոսություն պարագրելով իր մեջ տարածության, նյութի եւ ժամանակի հավերժական կատեգորիաները, հնչում է որպես սիրո փիլիսոփայության գեղարվեստականացված տրակտատ: Ոգեղեն թռիչքով աշխարհներում թեւելու, անցյալին, մեկնություն է այս փոքրածավալ գործը, որը, սակայն, իր ներքին, աներեւույթ չափագծումներով ծեռք է բեղացում: Արարվում է հավերժության օվկիանոսում նավարկության ելած մարդկային ոգին: Իրականում այս երկի հիմքում ընկած է բանաստեղծի սիրո փիլիսոփայության հիմնարար եւ սրբատառ օրենքը սերը հավերժություն է, հավերժականի գաղտնախորհուրդը, անմեկնելի հրաշք առեղծված... Բնական է, որ Իսահակյանի շատ գործեր վերնագրված են հենց այսպես՝ «Հավերժություն», «Հավերժական սեր», «Ասադիի վերջին գարունը», «Հարյուր տարի հետո» եւ այլն: Այս բոլոր գործերում սերը ներկայացվում է ժամանակավորապես հավերժական կատեգորիաների մեծածավալ ֆոնի վրա: Արեւելքի շատ լեգենդներ եւ ավանդազրույցներ բանաստեղծի գրչի տակ վերածվել են փիլիսոփայաշունչ եւ խորիմաստ քերթվածքների՝ հասնելով ձեւի եւ բովանդակության ներդաշնակության կատարելության: Բանաստեղծն իր երկամբ հակված է ավելի շատ դեպի փիլիսոփայական, քան քաջ ծանոթ է հնօրյա եւ նորօրյա, անհայտ եւ հայտնի շատ փիլիսոփայական ուղղությունների: Համաշխարհային ուսմունքների եւ փիլիսոփայության դպրոցները յուրացրածի իր իմաստությամբ՝ նա մեկ-երկու էջանոց գողտրիկ ստեղծագործության մեջ կարողանում է խտացնել-ուրվագծել հատկապես այս կամ այն փիլիսոփայական ուղղության, կրոնի կամ աղանդի գեղարվեստական ընկալման համամարդկային որակը: Նա մի տեսակ ջնարակում, գեղարվեստական առավել կատարելության է հասցնում հին մտածողների շատ դրույթները, վիպում է անկաշկանդ եւ անբռնազբոս, ասես իր իսկ երկայն մեկնությունները լինեն դրանք: Ահա, ասենք, բուդդիզմի գեղարվեստական յուրացման կատարյալ գործեր են՝ «Բուդդահան» (նվիրված մեծ Տոլստոյի հոբելյանին) եւ «Բուդդահան թռչուն» արձակ բանաստեղծությունները: Հարկ է նշել, որ բանաստեղծի արձակ գործերի, ինչպես նաեւ թարգմանությունների գերակշռող մասը հեքիաթների, լեգենդների, ժողովրդական ավանդազրույցների, առակների եւ մանրապատումների (անեկդոտների), աստվածաշնչյան տարրեր լեգենդների նոր մշակումներ են: Այս երեւույթն ինքնին վկայում է նրա աշխարհայացքի խորը փիլիսոփայականությունը, գրականությունը փիլիսոփայության եւ փիլիսոփայությունը՝ գրականության վերածելու առանձնահատուկ շնորհը: Այս տեսակետից, բանաստեղծի «Հիշատակարանը» մի յուրօրինակ փիլիսոփայական օրագրություն է, ուր նրա անհանգիստ միտքը պրպտում է եւ գտնում անքննելի շատ հարցերի պատասխանները:

կլասիկ ձեւակերպումներով: Երբեմն այդ մտքերը վերածվում են բանաստեղծի ստեղծագործությունների էջերում: Փիլիսոփայական մտքերի եւ կոնցեպցիաների այդ սփյուռքը իր գերխտացումը գտավ «Աբու-Լալա Մահարի» պոեմում: Իր փիլիսոփայական աշխարհայեցողությամբ՝ Իսահակյանը ավելի շատ իդեալիստ է, քան իդեալիզմ: Նրա բոլոր գործերը ծգտում են բացահայտել ոսկե կեղեւի մեջ թաքցվող էությունը՝ ինչպիսին է այն՝ դրակա՞ն, թե՞ բացասական, գեղեցի՞կ, թե՞ տգեղ, ընդունելի՞, թե՞ մերժելի: Նա ծգտում է իդեալին, կատարելությանը ամեն ինչում՝ թե մարդկային-անձնական մեղ ուղորտներում, թե հասարակական բազմաբարդ հարաբերություններում: Բանաստեղծը որոնում է կատարյալ մարդուն, ինչպես անտիկ իդեալիստ փիլիսոփա Դիոգենեսը՝ իր հանրահայտ ծրագով... Սրա հավաստումն են բանաստեղծի հետեւյալ տողերը. «Հազար մեկ հրաշք գիտեմ, որ կան մի մեծ հրաշքի մեջ՝ տիեզերքի մեջ... բայց հրաշքների հրաշքն է մարդը եւ իր հոգին»: Հովի. Թումանյանը «պայծառ սիրահար» է անվանել Սայաթ-Նովա մեծ սիրերգակին: Իսահակյանն էլ մի պայծառ սիրահար է խարկվող եւ հրաշքոտ մի սիրահար: Թեւեւ կյանքում անարձագանք մարում են նրա սիրո թրթռումները, արվեստում, սակայն, դառնում են վշտի հանճարով լուսազօծ բանաստեղծություններ: Եթե հարցին մոտենանք փիլիսոփայական տեսանկյունից, ապա կնկատենք մի հետաքրքիր երեւույթ. Իսահակյան-սիրերգուի մոտ առկա են սիրո առարկայական վերացարկված ընկալման երկու ծայրաբեկեռ: Օրինակները շատ են խոսում: Մայրական սիրո եւ կարոտի նկար են, ռելիեֆ, համարյա առարկայորեն տեսանելի պատկերներ են «Մայրիկիս», «Որսկան ախպեր» բանաստեղծությունները, իսկ «Ալագյազի մանիները», «Մաճկալ ես, բեզարած ես»-ը գեղջկական սիրո նույնպես առարկայորեն տեսանելի պատկերաշարք: «Եյ, ջան հայրենիքում» զգալի են Հովի. Թումանյանի հայրեներգության ռեալիստական ազդեցիկ հնչերանգները: Սրանք, ինչպես նկատեցինք, սիրո առարկայական ընկալման խոսուն օրինակներ են: Նույն՝ մայրական, հայրենիքի, մարդկային սիրո հակադիր, բեւեռացված ընկալման կլասիկ խտացումն է «Աբու-Լալա Մահարի» խոհափիլիսոփայական պոեմը, որի ժխտումի պաթոսը հենց հաստատումն է սիրո հավերժության: Վշտի հանճարի դրոշմն է կրում Ավ. Իսահակյանի մերթ՝ շոշափելիության չափ տեսանելի, գրեթե ասեղնագործ բանաստեղծությունները՝ «Սիրեցի, յարքս տարան», «Ղարդոս լացեք, սարի սմբուլ», «Զույր իմ նագելի», «Բարեւ կուտամ, չես առնի», «Սի մրահոն աղջիկ տեսա», «Տարիներ հետո քեզ տեսա նորից» եւ այլ բանաստեղծություններ. մերթ էլ ավելի շատ փիլիսոփայական խորքերի միտող, սիրո իդեալի որոնման բանածեւ-բանաստեղծությունները, բալլադները, արձակ պոեմները, օրինակ՝ «Անապատում, միրածի մեջ մի բեղվին», «Աղբյուրի մեջ մի մարալ» կառուցվածքով եւ բովանդակությամբ նմանատիպ բանաստեղծությունները, նրա քնարաշունչ, նկարչագեղ «Լիլիթը» եւ «Հավերժական սերը» եւ այլք:

Պարույր Սեւակն իր «Սայաթ-Նովա» մեմագրության մեջ առանձնաշեշտում է, որ «Սայաթ-Նովայի ոչ թե լիրիկան է փիլիսոփայական, այլ նրա փիլիսոփայությունն է լիրիկական, որ բնավ նույնը չէ: Խրատատու Սայաթ-Նովայի խոկուններն ընթացիկ մտքեր չեն...»: Արեւելքի բոլոր մեծ սիրերգակների՝ Սաադիի, Հաֆեզի, Օմար Խայամի, Նահապետ Զուլալի, Սայաթ-Նովայի նման Իսահակյանի սիրերգությունը նույնպես առանձնանում է խորը փիլիսոփայականությամբ, քանի որ նա արեւելյան տարերքի, խառնվածքի տեր երգիչ է: Նրա սիրերգությունը փարթամացած է արեւելյան սիրերգության ավանդներով, ճոխացած՝ արեւելյան գույների ծիածնաբույլերով՝ արեւելքու-ասիացու ինքնասույզ մի փիլիսոփայությամբ, որի խորքերից հառնում է գեղեցկության եւ սիրո իդեալը Գանգեսի ջրերի վրա բացվող լոտոսի պես: Հայ գրականության մեջ արեւելյան սիրերգության արձակ նմուշների մի գեղեցիկ շարքի հեղինակ է Սողոմոն Տարոնցին՝ «Ձրույց արեւի տակ» պերճախոս վերնագրով արձակ ժողովածուով: Նմանատիպ խառնվածքով հետագա երգիչների մեջ առանձնանում են Եղիշե Չարենցը («Տաղարան», «Ասպետական») եւ Հովի. Շիրազը, որը շարունակեց իր մեծ համերկացումը, գրական նախահորը հյուսելով իր սիրո տվայտանքների, երազների եւ արբեցման արեւելյան գորգը «Սիամանթո եւ իշեգարե» ոսկեմախշ հյուսվածքը՝ հնչեցնելով իր սիրո բազմալար քնարը: Ավ. Իսահակյանը ծնվել է գուսանների (աշուղներ) հռչակված օրրանում՝ Գյումրիում, որը կարելի է համարել մերօրյա Գողթան գավառ: Եվ բնորոշ է, որ ժողովրդական-աշուղական հնչերանգներով հարուստ նրա պոեզիայում մի ոսկյա շերտ թանձրանում է ժողովրդական տարրերի բանահյուսական տարրերով, խտանում հնօրյա աշուղների խրատ-խոհական փիլիսոփայությամբ: Իր արվեստի խոհականությամբ, կյանքի, մահվան, պատմության շատ առեղծվածներ քննելու, վերծանելու իր նկրտումներով՝ Իսահակյանի քնարերգության մեջ հետզհետե լայնանում է ստեղծագործությունների փիլիսոփայական երակը եւ նյութավորվում: Բազում երկրներում հանգրվանած հայոց բանաստեղծն իր ստեղծագործությունների մեծ մասը կառուցում է ոչ այնքան փիլիսոփայական առաջի, օրինակ, «Դավեննայում» հրաշակերտ բանաստեղծություն-հանկարծագրություն: Բանաստեղծի փիլիսոփայական խոկունները, ներքին հարատեւ ժայթքումներն իրենց դասական ձեւակերպումը ստացան «Աբու-Լալա Մահարի» պոեմում (տես՝ Ս. Աբովյան, «Փիլիսոփայական աշխարհընկալումը «Աբու-Լալա Մահարի» պոեմում»2):

«Մոնեա Լիզա Ջոկոնդա» ստեղծագործությունը, որն առեղծվածայինը, անբացատրելի վերծանելու փորձ է, հիշեցնում է Օսկար Ուայլդի «Դորեան Գրեյի դիմանկարը» նշանավոր գործը՝ գրված գեղարվեստի փիլիսոփայության խոր ըմբռնումով: Արձակի այս փոքրիկ գլուխգործոցում Իսահակյանն արձարծում է արվեստի լինելիության խորհուրդները, նրա հզորությունն ու մոգականությունը, բայց՝ արարող-արվեստագետի անգործությունն իր իսկ ստեղծածի հանդեպ: Այսպես կարելի է շարունակել՝ հավաստելու նրա

1 Պարույր Սեւակ. «Սայաթ-Նովա»՝ Երևան, 1987թ., էջ 231-232

2 Ս. Աբովյան. «Փիլիսոփայական գրականություն» ամսագիր, Եր., 1988թ., N 9, էջ 138-141

չատ արծակ գործերի, պոեմների, բանաստեղծությունների գրեթե ամբողջական փոխարկությունը, խոհական-էպիկական մասշտաբայնությունը: Ահա ինչ է գրում Լ. Չախվերդյանը «Ավ. Իսահակյանի մոտ» հուշակնարկում. «Ոչ ոք չէր կռահի, որ գոց գիտե գերմանական փոխարկությունը կամ երաժշտությունը, եթե հազարից մեկ իրեն առիթ չներկայանար մտաբերելու Կանտի կամ Նիցշեի որեւէ միտքը, Չայկովսկի կամ Բեթհովենի որեւէ գործը ամենայն մանրամասնությամբ, շոշափելի զգացողությամբ»: Ահա «Քնքուշ տատրակս» բանաստեղծությունը, որն իր ստեղծագործական ծննդաբանությամբ կարծես միաձուլում է Ավ. Իսահակյանի սիրո ընկալման այս երկու ծայրաբեկները, կամրջակապում իրար: Մեծ բանաստեղծի հոգու մրկակահույզ խառնարանում է թրծվել եւ մաքուր արտահայտչաձեւերով բանաստեղծացվել անխառնագործական գոյառման ակունքներում այս բանաստեղծությունը առնչվում է «Դարդըս լացեք, սարի սմբուլ» բանաստեղծությանը, որը, ինչպես հայտնի է, գրված է սիրած աղջկա՝ Շուշանիկ Մատակյանի ամուսնության թարմ, ցնցող ազդեցությամբ: Երկու բանաստեղծությունների գոյացման ակունքը նույն մեծ սիրո զգացմունքն է, որը հավերժացրել է երկու գողտրիկ քույրերին: Մեծ բանաստեղծի սիրտը, որ բաբախում էր Շուշանիկի սիրով, շուտով պիտի լքվեր եւ մորոնքներով թախծեր անպարփակ բնության գրկում, սիրած աղջկա ամուսնության լուրը հիմնիվեր ցնցում է նրա սիրո ու հույսերի աշխարհը, որ որբացել էր այլեւս.

*-Դարդըս լացեք, սարի սմբուլ,
Ալվան-ալվան ծաղիկներ,
Դարդըս լացեք, բաղի բլբուլ,
Ամպշող երկնուց զով հովեր:*

Մերն այդ, սակայն, չի մարել այն խարույկվել եւ նորահայտ մի բռնկմամբ լուսե ճաճանչների մեջ է շուրջառել մյուս քրոջ՝ Աննա Մատակյանի քնքշատես կերպարը: Այս փաստը հեղաշրջող դեր է կատարել նրա ստեղծագործական կյանքում, կարելի է ասել, որ այս կետում բեկվել է բանաստեղծի սիրո եզակիության պատմական հիմնահայացը, փոփոխվել է սիրո զգացողությունը: Նախ՝ աստվածացնում է Շուշանիկին, ապա՝ Աննային: Ինչպես Շուշանիկի, այնպես էլ Աննայի մեջ բանաստեղծը որոնել է ոչ թե կին, այլ սիրո իդեալ, իսկ հետագայում, որոնումներից հուսախաբ, նա իր հռչակավոր պոեմում հռետեսական շոպենհաուերյան ծայրահեղականությամբ կծխտի առհասարակ սերը (բացառությամբ մայրականի), կգրի «Լիլիթ» արծակ քնարական քերթվածքը, որը ծայրից ծայր բուրվառում է սիրո առեղծվածային, արբեցնող էությունը: «Լիլիթ»-ում արդեն բանաստեղծը չի ընկնում սիրո ընկալման մախկին ծայրահեղության մեջ, քանի որ նրա դառն կենսափորձը եւ աշխարհիմացությունն արդեն ուղենշել էին նրան դեպի աստվածաշնչյան ճշմարտությունը:

«Լիլիթ»-ում նա էպիկական հանդարտությամբ վիպում է, ծաղկում բառերով հնօրյա բիբլիական առասպելը, կերտում հողեղեն Եվային՝ որպես մարմնավոր կնոջ եւ անիրական, վերերկրային սիրո աստվածուհուն Լիլիթին՝ որպես սիրո իդեալ (թեեւ հին Զրեաստանում Լիլիթ անվանում էին անբարոյական կանացի): Աննիկի եւ Շուշանիկի մեջ բանաստեղծը գտել է իր երազ-աղջկան, նրա սերը անկիրք է եւ անմոլութ: Դետո միայն երիցս հուսախաբ նա պիտի ամրջի դեղնաշշուկ եւ լուսնիստ անապատի խենթացնող ամայությունը, ոսկեբաշ առյուծների մորթիների կայծ-հեղեղը, հետո պիտի մորոնքի.

*-Աննյութ, անմարմին, անկիրք սեր չկա,
Ախ, մաքուր սերը երազ է միայն:*

Նրա նոր սիրո մեջ բովանդակվում է ողջ տիեզերքը, որը եւ հավաստում են նամակի տողերը (Իսահակյանը նամակագրական կապեր է ունեցել Աննա Մատակյանի հետ)՝ «Իմ անգին, իմ պայծառ Աննիկ ջան, իմ ընկեր, իմ մաքուր սեր, ասա ինձ, ինչ-որ կուզես ես կկատարեմ քեզ համար ամենադժվարին բաները, մեռնել քո երազների համար, դու իմ շքեղ, իմ գուլալ երազ¹...: Իր սիրածին ուղղված այսօրինակ զգացմունքախառն խոստովանանքները հետագայում վերածվել են քնարաշունչ բանաստեղծությունների: Մեքերված հատվածը հիշեցնում է սիրացնող, պատանեկան խենթ բարբառումը.

*-Ինչ որ ցանկաս կուզե՞ս լինիմ,
Լինիմ երկինք ու երկիր,
Լինիմ ծով, ժայռ, արեւ, լուսին,
Միայն, միայն ինձ սիրիր²:*

Ուրեմն, այս բանաստեղծության հասցեատերը, ինչպես վկայում են նամակի տողերը, Աննան է՝ Շու-

1 Լ. Չախվերդյան, Ժամանակի հեք, Երևան, 1976, էջ 191:
2 Ավ. Իսահակյան, հ.1, Երևան, 1973, էջ 182:
3 Ավ. Իսահակյան, հ.6, Երևան, 1973, էջ 77-78:
4 Նույն փոխում:

շանիկի քույրը: Եվ կամ մեկ այլ բանաստեղծություն՝ կյանքի ծովում բազում նավաբեկություններ ապրած, իմաստնացած սիրահարի մի անչար խոստովանանք.

*-Ես աշխարհի մեջ երազն եմ սիրել,
Քո շուշան հոգին, քո հոգին քնքուշ,
Ես չեմ տենչացել երբեք քեզ տիրել,
Քո շուշան հոգին, քո հոգին քնքուշ³:*

«Ես սիրում եմ Աննիկին,- գրել է Իսահակյանը Արիստակես Տերտերյանին,- ավելի քան նրան կսիրեր քառասուն եղբայր, բայց իմ սիրո մեջ ֆիզիոլոգիա չկա, իմ հոգին ծգտում է դեպի նրա հոգին, ինչպես արտույտը՝ դեպի արեւը...»⁴:

Չարմացնող է այս սերն իր ահագնությամբ եւ անձնագոհությամբ: Աննա Մատակյանին ուղղված նամակների եւ բանաստեղծությունների համեմատական զուգորդությունից ակներեւ է դառնում Ավ. Իսահակյանի ստեղծագործությունների մեջ հետզհետե նստվածք տվող փոխարկայական մտքի գերխտացումը, որը հետագայում հանգեցրեց աֆորիզմներով եւ իմաստուն խոհերով հագեցած նոր երկերի ծնունդի, հատկապես «Լիլիթ» քնարաշունչ պատումին, սիրո փոխարկայական-բանաստեղծական ընկալման մի հոյակերտ նորոյա «Երգ-երգոց» է՝ օժտված աստվածաշնչյան խոսքի մոգիչ զորությամբ: Կարելի է ասել, որ նրա սիրերգությունը, ընթանալով փոխարկայական մտքի խոր հունով, դարձավ համապարփակ մարդերգության, սիրո, երջանկության, գեղեցկության իմաստների համառ ու տենդագին որոնումներով: «Եղիր աստծո ազատ թռչունի պես՝ շինիր քո բույնը, ուր ուզում ես եւ ուն հետ ուզում ես, ես սրտիս խորքից կնպաստեմ քո երջանկության շենքը շինելուն»⁵:

Այս միտքը բանաստեղծական կերպարանք է ստացել գողտրիկ տողերով.

*-Գնա, մոռացիր, եւ բախտը քեզ հետ,
Յյուսիր քո բույնը ուն հետ որ կուզես,
Թողիր ու գնա եւ մի նայիր ետ,
Թող տունս մնա թափուր սրտիս պես⁶:*

Նամակի տողերից հառնում է անձնագոհ սիրահարը, իսկ բանաստեղծության մեջ արդեն որոշակիորեն փոփոխված է տրամադրությունը, այստեղ արդեն իր վշտի հետ մեծանալ ցանկացող մերժված բանաստեղծն է, որ հրաժեշտի տանջագին խոսքերով է ճանապարհում նրան: Ի հակադրություն «Դարդըս լացեք» բանաստեղծության, ուր կա վշտի մեջ ապստամբող բողոք, «Քնքուշ տատրակս» բանաստեղծության մեջ արդեն իշխում է վշտի հետ հաշտված բանաստեղծի տխրաթախիծ տրամադրությունը: Գուցե երկրորդվող մերժումն այնքան էլ ուժգին չարձագանքվեց բանաստեղծի հոգում, ինչպես առաջինը, չէ՞ որ այս սերը կարծես եւ իրենն էր, եւ իրենը չէր: Կամ գուցե բազում վշտերից ընդարմացել էր նրա նրբաջիղ հոգին եւ լռիկ հաշտության անչարությամբ պարուրվել: Մերը բանաստեղծի ստեղծագործություններում հանդես է գալիս փոխարկայական տարբեր կերպավորումներով: Այն մերթ գեղջկական իրատեսիլ իդիլիա է («Արազի ափին բոստանս լինի»), մերթ՝ անվերծանելի, առեղծվածային Լիլիթ, մերթ՝ միրածի մեջ հալվող գեղեցկության իդեալ, որին հրաշք-ակնթարթում հաղորդվում է բեղվինի հոգին եւ անվերադարձ սլացքով հարմիրում դեպի նա.

*-Անապատում, միրածի մեջ մի բեղվին,
Շողքն է տեսել մի աղջկա գեղեցիկ,
Եվ փնտրում է հոգեսլաց, տենչագին,
Ծով կարոտով այն աղջկան գեղեցիկ⁷:*

Սիրո ընկալման ապացույց են նաեւ «Դարդըս լացեք» եւ «Քնքուշ տատրակս» բանաստեղծությունները՝ ծոնված Մատակյան քույրերին: Մի դեպքում՝ հրաբորբոք սեր՝ ցանկալի, առինքնող եւ կորստյան վիշտ, մյուս դեպքում՝ աննյութական, վերացարկված մի սեր՝ կորստյան կանխագուշակելի, կանխահաշտ գիտակցությամբ: Սիրո ընկալման այս երկու ծայրաբեկո կերպարներն առկա են «Լիլիթում»՝ առավել ընդգծված սիմվոլներով: Սիրո փոխարկայական մեկնությամբ՝ հայ գրականության մեջ «Լիլիթի» կողքին կարելի է հիշատակել Չարենցի «Ասպետականը»: Արեւմուտքի միջնադարյան խաչակիր ասպետների բոցավառ սիրո մի լեգենդ է ընկած այս գործի հիմքում (հետագայում ասպետական, դոն-քիշոտյան այդ սերը հասարականալով, վերածվեց դոն-ժուանության): Այն Չարենցի գրչի տակ վերածվել է խորապես փոխարկայական մի երկի, այս առումով դառնալով «Լիլիթին» հավասարաթեք մի երկ եւ ինչ-որ չափով նմա-

1 Ավ. Իսահակյան, հ.1, էջ 249:
2 Ավ. Իսահակյան, հ.6, էջ 67-68:
3 Ավ. Իսահակյան, Բանաստեղծի սիրույր, (Ե. Գրիգորյանի առաջաբանով), Երևան, 1975, էջ 39:
4 Ավ. Իսահակյան, հ.1, էջ 207, Երևան, 1973թ.:
5 Նույն փոխում, էջ 204:

նատիպ գործ: «Ասպետական»-ում միախառնված են Արեւմուտքի եւ Արեւելքի սիրերգության ավանդները, եւ դրանից է բխում այս գործի խոհականությունը, էպիկականությունը (չմոռանա՞ք, որ վեպի հայրենիքը Արեւմուտքն է): Ձուսպ խոհականություն՝ միախառնված արեւելյան սիրերգության կենսաշնայլ փիլիսոփայականությամբ՝ հեքիաթաշունչ գունագարդումներով: Չարենցն այս երկում սինթեզել է Արեւմուտքի եւ Արեւելքի սիրերգության լավագույն ավանդները՝ ստեղծելով սիրո երկու իդեալ, ինչպես Իսահակյանը՝ «Լիլիթում»:

*-Բեղվինի խարույկներ էին խոլ
Սեւամած աչքերը մեկի,
Մյուսի աչքերը-տիտուր
Միրածներ էին անմեկին¹:*

Եթե անուններ ունենային այս գեղեցկուհիները, ապա կլինեին նրանք երկու լիլիթներ, իսկ տրուբադուր-ասպետը՝ իր Եվային մոռացած մի աստվածաշնչյան Ադամ-ադամորդի, որը սրտի անմեկին սլացքով միտվում է դեպի գեղեցիկի խորհրդավորությունը, անըմբռնելի, անշոշափելի հրաշավորությամբ պարուրված գեղեցիկը, որը հետզհետե վերածվում է աստվածության:

*-Սոռացել էի արդեն ես
Իմ սրտի թագուհուն լուսե,
Որի դեմքը կյանքում հողմածեծ
Տարիներ էի երազել²:*

Կնոջ առեղծվածային էությունը մեկնելու այս դասական գործը (սատանա՞, թե՞ աստված, հրե՞շ, թե՞ հրեշտակ, մատնի՞չ, թե՞ առաքյալ), յուրօրինակ ասպետական սիրո տանջալի հավատաբանությունն է, եվրոպացի տրուբադուր-աշուղի երազած «արնահամ սեր»:

Տեսնենք, թե ինչպես է ավարտվում Իսահակյան սիրերգակի սիրո հավատաքննությունը:
«Բնքուշ տատրակս» բանաստեղծության ավարտը հնչում է սառն տրամաբանության ողջ իմաստությամբ.

*-Թող վայե քամին չոր գլխիս վրա,-
Ես չեմ հավատում կնոջ երդումին³...*

Այս ավարտը, սակայն, պարփակում է իր մեջ մերժման եւ անհաջողության ողջ դառնությունը՝ դարձյալ գրված դեպքի անմիջական տպավորությամբ: Հետագայում բանաստեղծն իր կորած սիրո իդեալը կորոնի աշխարհի տարբեր միջօրեականներում, բայց առանց այն լուսավոր հավատի, որ կորցրել էր անդարձ: «Մի մրահոն աղջիկ տեսա» բանաստեղծության մեջ Իսահակյանը գրում է.

*-Միամիտ չեմ հավատամ քեզ,
Տառապանքս փորձ ունի.-
Մի մրահոն կույս էր քեզ պես,
Կոտրեց սիրտս պատանի⁴...*

Բանաստեղծություն, գրված արդեն տարիներ անց, օտար մի քաղաքում, գեղեցկության հուզիչ ազդեցությամբ, սակայն այստեղ առկա է պատանեկան կորսված սիրո իդեալի եւ կորսված հավատի ցավագին վերհուշը, եւ նա չի հավատում այդ նոր սիրուն: Գեղեցկուհու նկարագրությունը հիշեցնում է Չարենցի «Ասպետականը»:

*-Աչքերը սեւ-արեւներ սեւ,
Արեւների պես անշեջ,
Գալարում էր մեջքը թեթեւ,
Ծաղկանկար շալի մեջ:
Աչքս դիպավ աչքի բոցին,
Ու գլուխս կախեցի.
Ժպտաց ժպտով առեղծվածի,
Հավերժական կանացի⁵:*

¹ Ե. Չարենց, Երկեր, Երևան, 1985, էջ 294:

² Նույն փոխում:

³ Ավ. Իսահակյան, հ.1, Երևան, 1973, էջ 207:

⁴ Նույն փոխում, էջ 321:

⁵ Նույն փոխում, էջ 321:

Այսպիսով, իր թափառական կյանքի ընթացքում բանաստեղծը հոգու մեջ կրել է պատանեկան մեծ սիրո անմոռանալի հուշը: Եվ շատ բնական է, երբ դարձյալ, տարիներ անց նա գրում է.

*-Որտեղ սիրուն կին տեսնեմ,
Կընորանամ դարդերըս.
Ու երբ անուշ երգ կըլսեմ,
Կըխորանամ դարդերըս¹...*

Բանաստեղծն իր կյանքի օրինակով ապացուցում է, որ իսկական սերը հավերժական է, մարդկային կյանքի անբաժանելի ուղեկիցը, նրա ապրած ու չապրած օրերի առհավատյան:

*-Ապրած իմ կյանքից
Մի սուրբ երազի
Բուրմունքը մնաց
Սրտումս անմոռաց-
Այն, որ ջերմ լացի
Առանց տանջանքի,
Խորունկ սիրեցի
Առանց տենչանքի²...*

Այսպիսով, յուրաքանչյուր նոր սերունդ յուրովի է ընթերցում Ավ. Իսահակյանին կամ ցանկացած տաղանդի գրական ժառանգությունը, հայտնաբերում նրա ստեղծագործությանն առանձնահատուկ նոր շերտեր, որոնք տաղանդի հարատեւության լավագույն վկայությունն են: Ահա, սրա մեջ է ինչպես Իսահակյանի, այնպես էլ մեծ գրողների ստեղծագործությունների հավերժական գաղտնիքը: Նրանք բոլոր ժամանակներում քայլում են ժողովրդի հետ, իրենց ծնող ժողովրդի պատմությանը համընթաց: Ավ. Իսահակյանի ստեղծագործությունների խոր կենսափիլիսոփայությունը՝ համամարդկային գաղափարների մշտանորոգ հնչեցմամբ, առավել ամբողջական են դարձնում նրա ստեղծագործական դիմագիծը բազմադարյան հայ գրականության պատմության մեջ:

С. А. Абовян - Любовные песни жизненной философии Аветика Исаакяна. - Проникнутые высоким чувством любви, страсти, поэма и проза Аветика Исаакяна одухотворены жизненной философией. Корни любви поэта соприкасаются с одиотипной русской и мировой литературой: в ракурсе темы, времени и пространства. Он прекрасно знал известные и неизвестные философские течения своего времени и далекого прошлого и в некотором роде использовал эти источники. Классический пример "Абу-Лала-Маари". Характерна также "Лилит". Своим внутренним философским толкованием любви эти произведения - своеобразный синтез литературных традиций Запада и Востока.

¹ Ավ. Իսահակյան, Երկեր, հ.1, էջ 135, Երևան, 1973:

² Նույն փոխում, էջ 233: